ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 470-Ա

22 օգոստոսի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանի 2025 թվականի օգոստոսի 20-ի Ն/3223-2025 զեկուցագիրը և Դավիթ Գրիգորյանի 2025 թվականի օգոստոսի 21-ի բացատրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դավիթ Գրիգորյանի նկատմամբ՝ աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, այն է՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանի և նույն վարչության գլխավոր մասնագետ Արմեն Առաքելյանի կողմից Հայաստանի Հանրապետության «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն կատարած աշխատանքային այցի շրջանակներում հայտնաբերված խախտումների՝ աշխատանքային ժամերի ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դավիթ Գրիգորյանի և այլ աշխատողներ

բացակայության, մեծահասակների ամբուլատոր բժշկական քարտերում համապատասխան գրառումների բացակայության, առկա դեղորայքի և դեղորայքի շարժի մատյաններում առկա անհամապատասխանության, ժամկետանց դեղորայքի առկայության, առաջին բուժօգնության դեղորայքի բացակայության, ինչպես նաև երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր բժշկական քարտերով դեղորայքների անհիմն դուրսգրումների հանգամանքներով պայմանավորված, կիրառել «Նկատողություն» կարգապահական տույժը:

22.08.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ